## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Վեհափառ Հայրապետի** բարձր նախագահության ներքո, **Գերագույն հոգևոր խորհուրդը** ուրբաթ, փետրվարի 9-ին, մասնավոր նիստ գումարելով, քննության առավ **սրբալույս մյուռոն օրհնելու և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ծննդյան 60-ամյակը** հանդիսավոր կերպով նշելու հարցերը:

Գերագույն հոգևոր խորհուրդը հետ խորհրդակցության որոշեց.

**1. Խնդրել Վեհափառ Հայրապետին՝ սրբալույս մյուռոն օրհնել ս. Էջմիածնի Մայր տաճարում, ըստ կանոնաց Հայաստանյայց եկեղեցվո, հառաջիկա տարի, 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը՝ ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:**

**2. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 60-ամյակը և գահակալության 14-րդ տարեդարձը հանդիսությամբ նշել նույնպես 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը:**

3. Այս որոշման մասին հաղորդել նվիրապետական Աթոռներին, թեմերին, ազգային-եկեղեցական մարմիններին պաշտոնական գրություններով և մամուլի միջոցով:

4. Մյուռոնօրհնեքի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի հանդիսություններին հրավիրել ինչպես ներքին թեմերից, նույնպես և սփյուռքի թեմերից հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ:

5. Այս հանդիսությունների առթիվ հրատարակել Վեհափառ Հայրապետի կոնդակների և քարոզների ժողովածու:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

10 փետրվար 1968 թ.
Մայր Աթոռ ս. Էջմիածին